# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2016թվականի N 40

## ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԱՎԱԳԱՆՈՒ N 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և 15-րդ հոդվածների, Նոր Գեղի համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել 2016 թվականի մայիսի 26-ի N 7 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1)Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով անհատույց գույք հանձնելու մասին

2) Հողամասերն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

կողմ (11) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Վանիկ Ավայան

Արմեն Բաբախանյան

Վլադիկ Գրիգորյան

Գագիկ Գևորգյան

ՎահագԳևորգյան

Մանյա Կիրակոսյան

Շիրալի Մամոյան

Մերուժան Մինասյան

Շուշանիկ Նազլուխանյան

Նաթելա Շմավոնյան

Նանուլի Ոսկանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 մայիսի 2016թվականի N 41

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, ինչպես նաև համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի «Նոտարական վավերացում չպահանջվող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 1851-Ն որոշման, **ավագանին որոշում է՝**

1. Համայնքի սեփականություն հանդիսացող գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի:

2. **Գույքի գտնվելու վայրն է՝** Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Նոր Գեղի համայնք

1) Խմելու ջրագծի ներքին ցանց

**Գույքի ծածկագիրն է՝** 07-048-2-1 N2080212 տրված 23.12.2005թ.

**Գույքի երկարությունը՝** 25.73 կմ

**Գույքի նպատակային նշանակությունը՝** ----

2) Բանավանի պոմպակայան

**Գույքի ծածկագիրն է՝** 19-19 N1475177 տրված 20.08.2003թ

**Գույքի մակերեսը՝** - 15.2քմ

**Գույքի նպատակային նշանակությունը՝** -----

3) Կոյուղագծեր **սեփականության իրավունքի վկայական չկա**

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

կողմ (11) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Վանիկ Ավայան

Արմեն Բաբախանյան

Վլադիկ Գրիգորյան

Գագիկ Գևորգյան

ՎահագԳևորգյան

Մանյա Կիրակոսյան

Շիրալի Մամոյան

Մերուժան Մինասյան

Շուշանիկ Նազլուխանյան

Նաթելա Շմավոնյան

Նանուլի Ոսկանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՒՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Նոր Գեղի համայնք,Ֆրոնտիկ Թևոսյանի 64,093335600,norgeghi.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մայիսի 2016թվականի N 42

## ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 20-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին որոշում է.

1.Մանուկ, Նունուֆար, Արման և Սարգիս Աճեմյաններին սեփականության իրավունքով պատկանող 347-32 կադաստրային ծածկագրով 0.46 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից գտնվող 07-048-0347-0064 կադաստրային ծածկագրով 0.41843 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ընդլայնման համար, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կադաստրային արժեքով, որը կազմում է 33900/երեսուներեք հազար ինը հարյուր/ դրամ:
2.Մարգար Սմբատի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 0347-0026 կադաստրային ծածկագրով 0.2246 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից գտնվող 07-048-0347-0065 կադաստրային ծածկագրով 0.12646 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ընդլայնման համար, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կադաստրային արժեքով, որը կազմում է 17080/տասնյոթ հազար ութսուն/ դրամ:
3.Տիգրան Լեոնիդի Ղադոյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0330-0033 կադաստրային ծածկագրով 1.2694 հա գյուղատնտեսական նշանակության կորիզավոր այգուն կից գտնվող 07-048-0330-0032 կադաստրային ծածկագրով 0.04534 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ընդլայնման համար, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կադաստրային արժեքով, որը կազմում է 9190/ինը հազար հարյուր իննսուն/ դրամ:

4.Իշխան Ժորայի Սիմոնյանին և Սուսաննա Իշխանի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0347-0027 կադաստրային ծածկագրով 0.228 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողին կից գտնվող 07-048-0347-0066 կադաստրային ծածկագրով 0.10952 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը, որը հնարավոր չէ որպես առանձին գույքային միավոր օտարել աճուրդային կարգով, ընդլայնման համար, ուղղակի վաճառքի միջոցով օտարել կադաստրային արժեքով, որը կազմում է 14800/տասնչորս հազար ութ հարյուր/ դրամ:

կողմ (11) դեմ ( 0) ձեռնպահ ( 0)

Վանիկ Ավայան
Արմեն Բաբախանյան
Վլադիկ Գրիգորյան
Գագիկ Գևորգյան
ՎահագԳևորգյան
Մանյա Կիրակոսյան
Շիրալի Մամոյան
Մերուժան Մինասյան
Շուշանիկ Նազլուխանյան
Նաթելա Շմավոնյան
Նանուլի Ոսկանյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՖՐՈՆՏԻԿ ԹԵՎՈՍՅԱՆ